ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«11» մարտի 2025թ. № 199

ԱԼՎԱՐԴ ԴԱՐՉԻՆՅԱՆԻ ԴԻՄՈՒՄՈՎ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետով և 3-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 57-րդ հոդվածի 2-րդ մասով, հաշվի առնելով, որ գոյություն ունեն միևնույն անձի, միևնույն առարկայի վերաբերյալ և միևնույն հիմքերով ուժի մեջ մտած վարչական և դատական ակտեր՝ Սպիտակ համայնքի ղեկավարի 2023 նոյեմբերի 6-ի թիվ 1041 որոշումը, որն օրենքով սահմանված կարգով անվավեր կամ առ ոչինչ չի ճանաչվել, և թիվ ՎԴ/10286/05/23 վարչական գործով Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի 2024 թվականի նոյեմբերի 27-ի «Գործի վարույթը կարճելու մասին» որոշումը՝ ***որոշում եմ.***

1. Ալվարդ Դարչինյանի՝ մեկ սենյականոց բնակարան տրամադրելու մասին դիմումով հարուցված վարչական վարույթը կարճել:

2. Սույն որոշման մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով եռօրյա ժամկետում իրազեկել Ալվարդ Դարչինյանին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարչական վարույթի մասնակցին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում իրազեկելուն հաջորդող օրվանից:

4. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Սպիտակ համայնքի ղեկավարին կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ _____ Ա. ՄԱԹՈՍՅԱՆ

2025թ. մարտի 11
ք. Սպիտակ